ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂ

Ուսանողական գիտական ընկերության 2018-19 ուստարվա գործունեության

Հաշվետվություն

ԵՊՀ ԻՄ-ի Ուսանողական գիտական ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է թվով 39 գիտական, կրթական, մշակութային ծրագրեր և միջոցառումներ, մասնավորապես՝ համաժողով, ինտելեկտուալ խաղեր, գիտական և գիտահանրամատչելի զեկուցումներ և սեմինարներ, կինոդիտումներ, ճանաչողական այցեր, ներբուհական գիտաժողով, առցանց հարցում, ցուցահանդես և այլն։ 2018թ. հոկտեմբերի 27-ին կազմակերպվել է ներբուհական գիտաժողով՝ «Հինավուրց և երիտասարդ մայրաքաղաք» խորագրով, որին մասնկացում են

Տնտեսագիտության և Հումանիտար Գիտությունների ֆակուլտետների 12 ուսանողներ։ 2018թ. նոյեմբերի 28-ին կազմակերպվեց «Շախմատի մասնաճյուղային առաջնություն»։ 2019թ. ապրիլի 3-ին անցկացվեց հուշ-ցերեկույթ՝ «Նրանք ապրում են» խորաագրով։ Կիսամյակի ընթացքում ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ գիտական խորհրդի որոշման համաձայն՝ ֆեյսբուքյան էջում սկսվեց հրապարակվել ոչ միայն ՈՒԳԸ-ի գործունեության կամ բուհում անցկացվող տարբեր միջոցառումների մասին ինֆորմացիա, այլ նաև նյութեր տարաբնույթ թեմաներից։ 2019թ. մարտի 30-ից մայիսի 3-ը կայացան դասախոսություններ՝ «Հայաստանյան բիզնեսի հաջողությունները» խորագրով։ 2019թ. մայիսի 16-ին կայացավ ԵՊՀ 100-ամյակին նվիրված դաս-քննարկում։

Թանգարանների միջազգային օրվան նվիրված մասնաճյուղի բոլոր ֆակուլտետներից 24 ուսանողներ այցելեցին «Մայր Հայաստան» զինվորական թանգարան, Միջին Արևելքի արվեստի թանգարան, Արվեստի և գրականության թանգարան, Հայաստանի պատմության պետական թանգարան, Հայսատանի ազգային պատկերասրահ։ 2019թ. մայիսի 23-ին և 25-ին կայացան Շախմատի կանանց և տղամարդկանց առաջնությունները։

Երկու կիսամյակների ընթացքում կազմակերպվել են թվով 7 սեմինար և 3 գիտահանրամատչելի զեկուցում, թվով 4 կինոդիտում, ինչպես նաև թվով 3 ինտելեկտուալ խաղի մասնաճյուղային առաջնություն և տնտեսագիտական տերմիններով արդեն ավանդույթ դարձած թվով 2 ինտելեկտուալ խաղ։ 2019թ. մայիսի 14-ին կայացավ «Ամենախելացին» ինտելեկտուալ խաղը, որին մասնակցում էին 10 ուսանող՝ մասնաճյուղի բոլոր ֆակուլտետներից։